

կը ստանաք... Սորհուրդ կուտամ, որ դուք անձամբ այսուհետեւ չզաք փոստայ, թոյլ տուէք, որ ձեր նամակները ես ինքս բերեմ ձեզ»...

«Երիտասարդը իր խելացի ու անկեղծ արտայայտութեամբ անմիջապէս գրաւեց իմ վստահութիւնը: Ես սիրով ընդունեցի նրա առաջարկը եւ նոյն տարուանից իսկ նա մտաւ կազմակերպութեան մէջ, որպէս տեղական կոմիտէի, թէ խմբի անդամ: Նոր էր աւարտել Գէորգեան ճեմարանը եւ գրում էր Արփիար-Շահնազարի «Հայրենիք»-ի մէջ սիրուն յոգուածներ Օ. Գ. Դ. ստորագրութեամբ (Օննիկ Գէորգեան Դերձակեան):

«Շուտով յանձնեցի Օննիկին կուսակցութեան նամակագրութիւնը, որ նա տանում էր փայլուն կերպով. իսկ 1895-ից, նա արդէն անգամ էր Կեդրոնական Կոմիտէի եւ վարում էր ի միջի այլոց Վարդգէսի խումբը»:

Այժմ թողնենք Իւսիւֆեանին, որ 1895-ի վերջերին հեռանում է Կ. Պոլսից եւ անցնում Ամերիկա:

Գալիս է 1896-ի օգոստոս 14-ը, Բանկ Օտտոմանի դէպքը: Օննիկը, հարկաւ, նախապատրաստական աշխատանքը կատարողներից մինն է: Եւ երբ ժիրօտ նաւը տանում է 26 բմբոսաներին դէպի Մարսէյլ, երբ հերոսական կռուից յետոյ Սամաթիան ընկճւում է եւ ապրտամբութեան պարագլուխները ընկնում թշնամու գնդակների տակ, երբ համիտեան լրտեսները որսկան չների պէս յեղափոխական գործիչներ էին փնտռում մայրաքաղաքի բոլոր թաղերում, Օննիկ Դերձակեանը այնտեղ է, Կ. Պոլսում, իր պաշտօնի մէջ եւ մենմենակ շարունակում է կազմակերպութեան գործը, շարունակում է յարաբերութիւն պահպանել ներսի ու դրսի հետ:

Այդ դրութիւնը, սակայն, երկար չէ կարող տևել եւ երիտասարդ գործիչը, անխուսափելի ձերբակալումից ազատուելու համար, ինքզինքը նետում է արտասահման. պրօպականդի շրջան է անում Բուլղարիոյ ու Ռումանիոյ հայ գաղութներում եւ ապա կազմակերպութեան հրահանգով գալիս է Փրնէս:

* * *

Եւ ես տեսայ նրան առաջին անգամը Փրնէսի մէջ, 1897-ի գարնան: Կը լինէր այն ժամանակ 27-28 տարեկան: Աշխոյժ, գիւրաշարժ, խօսուն, վերին աստիճանի գործունեայ եւ միանգամայն լուրջ ու կիրթ:

Ահա առաջին տպաւորութիւնը: Ճեմարանականը առաջին իսկ վայրկեանից ցոյց էր տալիս իր փայլը, հմուտ հայ լեզուի, գրականութեան ու պատմութեան մէջ, գրող, ճարտասան եւ պօլեմիստ, բանակոտող:

«Դրօշակ»ը բաց արեց նրա առջեւ իր էջերը:

Փրնէսի խումբը նուազել էր: Խաթակը (Բարան) Եգիպտոս էր գնացել կազմակերպութեան գործերով, Յոնանը Պարսկաստան: Մնում ենք Ռօստոմը, Սարգիսը եւ ես: Ժամանակաւոր հիւրեր էին Բանկ Օտտոմանի երկու գլխաւոր դէմքերը՝ Հրաչը եւ Գարօն:

Առաջին իսկ օրերից Վահայը (այդպէս էինք անուանում այն ժամանակ Վոսիկեանին), կարելի է ասել, իր ձեռքն առաւ խմբագրութեան եւ բիւրօի գործերը: Առաջին իսկ օրերից նա մտաւ իր իսկական դերի մէջ, դարձաւ կուսակցութեան առաջին քարտուղարը: Թէ կազմում ու խմբագրում էր «Դրօշակ»ը եւ թէ վարում էր ահագին նամակագրութիւնը, խորհրդակցելով, ի հարկէ, ընկերների հետ, հրահանգուելով գլխաւորապէս Ռօստոմից:

Շատ անգամ համեստօրէն նա ինքզինքը կ'անուանէր «Դրօշակի քարտուղար»:

Կազմակերպութիւնների, ինչպէս եւ պետութիւնների մէջ, քարտուղարի պաշտօնը առաջնակարգ ու պատուաւոր պաշտօններից մինն է: Պահպանել շարունակական ու կենդանի կապ կենտրոնների ու հեռուոր մարմինների մէջ, տալ անգաղար տեղեկութիւններ կացութեան մասին, հրահանգներ գործելակերպի, տարտիքի մասին, նամակներով ու յորդորներով քաջալերել խմբերը, զինուորագրել նոր ուժեր, ստեղծել նոր կոմիտէներ եւ այլն եւ այլն:

Ով միշտ է իր գաղափարային մկրտութեան առաջին օրերը, լաւ գիտէ, թէ ինչ դիւթական ազդեցութիւն է անում լաւ խմբագրը-